ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ

թիվ 1/1

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության կանոնադրությունն ու փորձագետների և գործավարի աշխատանքային պարտականությունները հաստատելու մասին

Հիմք ընդունելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-5-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 31-րդ հոդվածի 2-րդ մասը՝

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունն (այսուհետ՝ Քաղաքացիական պայմանագիր խմբակցություն կամ Խմբակցություն)

Ո Ր Ո Շ Ե Ց

I. հաստատել «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության կանոնադրությունը՝ համաձայն սույն որոշման **Հավելված 1-ի**,

II. հաստատել «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության փորձագետների և գործավարի աշխատանքային պարտականությունները՝ համաձայն սույն որոշման **Հավելված 2-ի:**

Հավելված 1

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Երևան քաղաքի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը ստեղծված է համարվում նորընտիր ավագանու առաջին նստաշրջանի բացման օրը:

1.2. «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կողմից Երևանի ավագանու 2023թ. սեպտեմբերի 17-ին կայացած ընտրությունների համար ներկայացված համամասնական ցուցակում ընդգրկված անձինք, որոնք ընտրությունների արդյունքում ստացել են ավագանու անդամի մանդատ, միասին կազմում են «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը: Խմբակցությունը կազմված է 24 անդամից:

1.3. Խմբակցությունը գործում է ՀՀ Սահմանադրությանը, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքներին, Երևան քաղաքի ավագանու կանոնակարգին, այլ իրավական ակտերին և սույն կանոնադրությանը համապատասխան:

1.4. Խմբակցությունը առաջնորդվում է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության 2023 թվականի Երևանի ավագանու ընտրությունների նախընտրական ծրագրում ամրագրված դրույթներով:

2. ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

2.1. Խմբակցությունն իր աշխատանքները կազմակերպում է հերթական և արտահերթ նիստերի միջոցով, որոնց ընթացքում իրականացվում են քննարկումներ ու կայացվում որոշումներ օրակարգային հարցերի վերաբերյալ:

2.2. Խմբակցության գործունեության հիմնական սկզբունքներն են՝

1. բազմակարծությունը,
2. ժողովրդավարությունը,
3. փոխադարձ հարգանքը Խմբակցության ներսում, ինչպես նաև հարգանքն այլ քաղաքական ուժերի և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների նկատմամբ,

4. փոխօգնությունը Խմբակցության անդամների միջև,
5. մարդակենտրոնությունը,
6. հետևողականությունը,
7. նախաձեռնողականությունը,
8. հաշվետվողականությունը «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը և հանրությանը,
9. գործունեության թափանցիկությունը,
10. կարգապահությունը, թիմային գործելաոճը և համերաշխությունը,
11. հոգատարությունը քաղաքի նկատմամբ:

3. ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Խմբակցության ղեկավարը՝

3.1. հրավիրում և վարում է խմբակցության նիստերը:

3.2. Կազմում և Խմբակցության անդամներին է ներկայացնում խմբակցության նիստի օրակարգը, կազմակերպում է Խմբակցության բնականոն գործունեությունը, նախապատրաստում է խմբակցության նիստերի անցկացումը, վերահսկում Խմբակցության որոշումների կատարումը:

3.3. Բանակցություններ է վարում Երևանի ավագանու այլ խմբակցությունների և ավագանու անդամների հետ՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության նախաձեռնությունները պաշտպանելու համար: Խմբակցության ղեկավարի հանձնարարության դեպքում, դա կարող է անել նաև խմբակցության քարտուղարը:

3.4. Ներկայացնում է «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության շահերը Երևանի քաղաքապետարանում:

3.5. Կազմակերպում և վարում է Խմբակցության փաստաթղթաշրջանառությունը և նամակագրությունները:

3.6. Կազմակերպում է քաղաքացիների հետ հանդիպումներ Խմբակցության ավագանու անդամների և փորձագետների հետ՝ ըստ Խմբակցության անդամների հետ համաձայնեցված ժամանակացույցի:

3.7. Կատարում է Օրենքով և Խմբակցության կանոնադրությամբ սահմանված այլ գործառույթներ:

3.8. Անհրաժեշտության դեպքում հրապարակայնորեն ներկայացնում է խմբակցության պաշտոնական դիրքորոշումը ավագանու նիստերում, լրատվամիջոցներին կամ այլ հարթակներում:

3.9. Հաշվետու է Խմբակցությանը և հանրությանը:

4. ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Խմբակցության քարտուղարը՝

4.1. Խմբակցության ղեկավարի բացակայության ժամանակ փոխարինում է ղեկավարին և Օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում գործում ի շահ Խմբակցության:

4.2. Կատարում է Խմբակցության կանոնադրությամբ սահմանված այլ գործառույթներ:

4.3. Հաշվետու է Խմբակցությանը և հանրությանը:

5. ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Խմբակցության անդամն իրավունք ունի՝

5.1. հաշվետվություն պահանջել խմբակցության գործունեության մասին:

5.2. Իրավունք ունի հայտնել իր դիրքորոշումը խմբակցության նիստում քննարկվող հարցերի վերաբերյալ:

Խմբակցության անդամը պարտավոր է՝

5.3. մասնակցել Երևան քաղաքի ավագանու, ավագանու մշտական հանձնաժողովների և խմբակցության նիստերին, իսկ բացակայության դեպքում՝ այդ

մասին նախապես տեղյակ պահել խմբակցության ղեկավարին իսկ նրա բացակայության դեպքում քարտուղարին:

5.4. Կատարել ավագանու՝ Օրենքով սահմանված գործառույթները, խմբակցության որոշումները և սույն կանոնադրության պահանջները:

5.5 Ձեռնպահ մնալ խմբակցությունում քննարկվող որևէ հարցի վերաբերյալ հրապարակայնորեն դիրքորոշում արտահայտել, քանի դեռ առկա չէ այդ հարցի վերաբերյալ խմբակցության պաշտոնական դիրքոշումը:

5.6 Մինչև որևէ իրավական ակտի ընդունման նախաձեռնությամբ հանդես գալը այդ մասին տեղեկացնել խմբակցության ղեկավարին, անհրաժեշտության դեպքում այն Խմբակցության քննարկմանը ներկայացնելու համար:

6. ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԵՐԸ

6.1. Խմբակցության հերթական նիստերը հրավիրվում են ավագանու նստաշրջանների ընթացքում՝ ամիսը առնվազն մեկ անգամ՝ ավագանու հերթական նիստին նախորդող չորեքշաբթի օրը ժամը 19:00-ին, կամ, անհրաժեշտության դեպքում, այլ օրերի և ժամերի Խմբակցության ղեկավարի հրավերով:

6.2. Խմբակցության ղեկավարի կամ անդամների առնվազն մեկ երրորդի նախաձեռնությամբ կարող են հրավիրվել նաև արտահերթ նիստեր:

6.3. Խմբակցության նիստերի անցկացման վայրն է Երևանի քաղաքապետարանի շենքը (Երևան, Արգիշտի 1): Խմբակցության նիստ կարող է հրավիրվել նաև այլ վայրում Խմբակցության ղեկավարի կամ անդամների մեծամասնության հրավերով:

6.4 Խմբակցության անդամների մեկ վայրում հավաքվելու անհնարինության դեպքում Խմբակցության նիստեր կարող են հրավիրվել նաև առցանց տեսակապի միջոցով:

6.5. Հերթական նիստի անցկացման օրվա, ժամի, վայրի և օրակարգի մասին Խմբակցության անդամները ծանուցվում են Խմբակցության էլեկտրոնային հարթակի կամ հեռախոսազանգի միջոցով նիստից առնվազն մեկ օր առաջ:

6.6. Արտահերթ նիստերի անցկացման դեպքում ծանուցումն ապահովվում է նիստից առնվազն մեկ ժամ առաջ՝ Խմբակցության էլեկտրոնային հարթակի և հեռախոսազանգի միջոցով:

6.7. Խմբակցության նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում են Խմբակցության անդամների կեսից ավելին:

6.8. Նիստը վարում է Խմբակցության ղեկավարը, իսկ նրա բացակայության դեպքում՝ Խմբակցության քարտուղարը: Խմբակցության ղեկավարի և քարտուղարի միաժամանակյա բացակայության դեպքում նիստը վարում է Խմբակցության տարիքով ավագ անդամը:

6.9. Խմբակցության նիստի օրակարգում ընդգրկված հարցերը քննարկվում են հետևյալ ընթացակարգով.

1. օրակարգի հաստատում,
2. քննարկվող հարցի վերաբերյալ զեկուցողի ելույթը մինչև տասը րոպե,
3. հարցեր զեկուցողին. հարցի համար տրվում է մինչև երկու րոպե, իսկ պատասխանի համար մինչև չորս րոպե ժամանակ,
4. մտքերի փոխանակություն մինչև հինգ րոպե,
5. քվեարկություն (ձեռքով):

6.10. Խմբակցության ղեկավարը, իսկ նրա բացակայության դեպքում քարտուղարը և Խմբակցության անդամ հանդիսացող քաղաքապետը կարող են հանդես գալ արտահերթ ելույթներով:

6.11. Նիստում յուրաքանչյուր հարցի վերաբերյալ քվեարկությունը կատարվում է այդ հարցի քննարկման ավարտից անմիջապես հետո:

6.12. Խմբակցության նիստում որոշումներն ընդունվում են, եթե դրանց կողմ են քվեարկել Խմբակցության՝ նիստին ներկա անդամների կեսից ավելին, բայց ոչ պակաս քան Խմբակցության առնվազն 8 անդամները: Քվեարկության արդյունքում ձայները հավասար բաշխվելու դեպքում ընդունվումը է այն որոշումը, որի օգտին քվեարկել է Խմբակցության ղեկավարը, իսկ նրա բացակայության դեպքում քարտուղարը, իսկ նրանց միաժամանակյա բացակայության դեպքում նիստը վարող տարիքով ավագ անդամը:

6.13. Նիստի արձանագրությունը, որը ներառում է Խմբակցության նիստում կայացված որոշումները, ստորագրում է Խմբակցության ղեկավարը: Քվեարկությունն ընթանում է բաց ընթացակարգով: Խմբակցության կողմից որևէ պաշտոնում թեկնածու առաջադրելու կամ ընտրելու հարցերը կարող են անցկացվել փակ գաղտնի քվեարկության միջոցով:

6.14. Եթե Խմբակցության կողմից որևէ պաշտոնում թեկնածու առաջադրելու կամ ընտրելու համար առաջադրվել է մեկ թեկնածու, ապա նա ընտրվում է, եթե նրան կողմ քվեարկած ձայները ավելի են դեմ քվեարկած ձայներից, բայց ոչ պակաս քան

խմբակցության անդամների առնվազն 8-ի ձայնը: Եթե առաջադրվել է մեկից ավելի թեկնածու, բայց նրանցից ոչ մեկը չի ստացել խմբակցության անդամների ընդհանուր թվի կեսից ավելիի ձայները, ապա տեղի է ունենում երկրորդ փուլ, որին մասնակցում են առավել շատ ձայներ ստացած երկու թեկնածուները: Երկրորդ փուլում ընտրված է համարվում առավել շատ ձայներ ստացած (բայց ոչ պակաս քան խմբակցության անդամների առնվազն 8-ի ձայները) թեկնածուն: Եթե երկրորդ փուլի արդյունքում հնարավոր չի լինում ընտրել թեկնածու, ապա նրանց միջև անցկացվում է լրացուցիչ փուլ, որտեղ ընտրված է համարվում առավել շատ ձայներ ստացած թեկնածուն: Լրացուցիչ փուլում ձայների հավասար բաշխվելու դեպքում տեղի է ունենում վիճակահանություն:

6.15. Խմբակցության ղեկավարի, Խմբակցության անդամ հանդիսացող քաղաքապետի կամ անդամների առնվազն մեկ երրորդի հրավերով խմբակցության նիստերին կարող են հրավիրվել նաև այլ անձինք:

7. ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

7.1. Խմբակցության կանոնադրությունն ընդունվում է, ինչպես նաև դրանում փոփոխությունները կատարվում են Խմբակցության անդամի առաջարկությամբ՝ Խմբակցության անդամների ընդհանուր թվի մեծամասնության որոշմամբ:

7.2. Խմբակցության կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկությունները խմբակցության նիստում քննարկվում են արտահերթ:

7.3. Սույն կանոնադրությունը ուժի մեջ է մտնում 2023թ. հոկտեմբերի 17-ից:

Հավելված 2

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ

Խմբակցության փորձագետների և գործավարի աշխատանքային պարտականությունները սահմանվում են Օրենքով և կանոնակարգով: Սույն ցանկը կրում է պրակտիկ աշխատանքային հարաբերություններում նրանց կողմից իրականացման ենթակա գործառույթների և լուծման ենթակա խնդիրների հստակեցման նպատակ՝ նրանցից յուրաքանչյուրի զբաղեցրած պաշտոնին համապատասխան:

1. Խմբակցության փորձագետները՝
   - զբաղվում են իրավական ակտերի նախագծերի մշակմամբ,
   - ուսումնասիրում և վերլուծական նյութեր են պատրաստում Երևանի ավագանու նիստերում քննարկման ենթակա իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ,
   - պատրաստում են Խմբակցության անունից ուղարկվող գրությունները,
   - Խմբակցության ղեկավարի հանձնարարությամբ՝ այլ կերպ ապահովում Խմբակցության մասնագիտական գործունեությունը:

2. Խմբակցության գործավարը՝
   - քաղաքապետարանի աշխատաքային ծրագրի միջոցով իրականացնում է Խմբակցության ղեկավարի և քարտուղարի, իսկ անհրաժեշտության դեպքում անդամների անունից մտից և ելից գրությունների էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունը,
   - պատասխանում է խմբակցության հեռախոսազանգերին,
   - Խմբակցության ղեկավարի հանձնարարությամբ՝ այլ կերպ ապահովում Խմբակցության գործավարությունը: